ԱՆՏԻՊ ԷՋԵՐ ԶԱՐՄԱՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻՑ ԵՒ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ա.

Հայ ժողովրդական ստեղծագործութիւնների մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում առակներն ու սրամտութիւնները (անեկդոտները), որոնք իրենց հիմնական կառուցուածքով եւ էութեամբ փոքրիկ պատմուածքներ են եւ նկարագրում են մի որեւէ երեւոյթ մարդկանց կամ կենդանիների կեանքից:

Հայ բանահիւսութեան այդ թանկագին նիւթերը գրաւիչ են իրենց սրամտութեամբ եւ խրատական ու այլաբանական երանգաւորումներով, որոնք սերտ կերպով ներդաշնակելով իրական կամ երեւակայական պատկերների հետ, կազմում են մի անբաժան ամբողջութիւն:

Սակայն, առակների եւ սրամտութիւնների գլխաւոր առանձնայատկութիւնն երգիծական երանգն է եւ զուարճախօսութիւնը, որոնք մերկացնում են ու հեգնում անհատական, ընտանեկան եւ հասարակական կեանքի բարոյական թերութիւնները, մոլութիւնները, միաժամանակ քննադատում տիրող նախապաշարումները, յետամնացութիւնն ու տգիտութիւնը: Այդ տեսակէտից էլ առակներն ու սրամտութիւնները դաստիարակչական ընոյթ ունեն եւ հայ բանահիւսութեան պատմութեան համար առանձին արժէք են ներկայացնում:

Կենցաղային, երգիծական եւ ազգագրական այդ նիւթերի մէջ խոշոր դեր են կատարում ժողովրդի մտքի սրութիւնը, խմաստութիւնը, փորձառութիւնը, քննադատական տարրերը եւ քնարական ապրումները, իսկ պատկերաւորութիւնն ու զուարճութիւնն առանձին փայլ են տալիս նիւթերի բովանդակութեանը եւ խրախճանում ընդհանուր տպաւորութիւնը:

Բայց կան առակներ եւ անեկդոտներ, որոնք խրատական-բարոյախօսական գաղափարը պարզ գոյներով չեն արտայայտում, այլ թողնում են, որ իրենք ընթերցողներն ըմբռնեն նիւթի էական միտքը:

Ընդգծենք նաեւ այն, որ քաղաքներում եւ գիւղերում կան յատուկ վարպետ առակներ պատմողներ եւ սրախօսողներ, որոնք հրապարակ են գալիս ժողովրդական խնջոյքներում, ընտանեկան հանդէսներում և իրենց սրամիտ, զուարճալի պատմութիւններով ժողովականներին ծիծաղեցնում եւ անսահման ուրախութիւն են պատճառում:

Բ.

Զարմահալի հայ ժողովրդական բանահիւսութիւնը եւս հարուստ է զուտագեղ առակներով և սրամտութիւններով, որոնց հիմնական մասը հայ գեղջուկներին աւանդ են մնացել 1606 թուին, Շահ-Աբբաս Ա.-ի բռնի գաղթի ժամանակ, Հայաստանից եկած իմաստուն, գրասէր եւ շինարար պապերից: Այնուհետեւ յօրինուել են բազմաթիւ նոր առակներ ու սրամտութիւններ եւ հարստացրել են Զարմահալի ժողովրդական բանահիւսութեան գանձարանը: Այնտեղ գեղջուկների սրամտութեան ու իմաստութեան հետ այլաբանօրէն հանդէս են գալիս ընտանեկան, կենցաղային եւ հասարակական կեանքի որոշ թերութիւններն ու պակասութիւնները, յոռի բարքերն ու սխալները: Գծագրւում են նաեւ գեղջուկ ժողովրդի տարբեր կերպարները – գիւղացին, պարոնը, ծառան,

հովիւը, քահանան, թաղաւորը, ոստիկանը, մարդն ու կինը, հարսն ու սկեսուրը եւ այլ իրական դէմքեր: Տեսնում էք նաեւ պատկերներ կենդանական աշխարհից:

Այդ սրամտութիւններն արժանի են ուշադրութեան նաեւ լեզուական տեսակէտից, որովհետեւ հարստացնում են Զարմահալի ժողովրդական բարբառի գանձարանը:

Արձանագրենք եւ այն, որ Զարմահալի գեղջուկների մէջ եւս կան առակներ և անեկդոտներ պատմող վարպետներ, որոնք ճմեռուայ երկար գիշերներն օթախներում, թոնրի շուրջը համախմբուած, գեղջուկների համար պատմում են նորանոր առակներ եւ սրամտութիւններ եւ ուրախ զրոյցներով համակում ունկընդիրներին:

Ընդգծենք, սակայն, որ Զարմահալի առակներն ու սրամտութիւնները մինչև օրս էլ գրի չեն առնուել և անտիպ են մնացել: Ահա այդ կարեւոր նիւթերը 1920 եւ 1946 թուականներին գեղջուկների շրթերից գրի առինք, երբ Զարմահալի հայաբնակ գիւղերում ուսումնասիրում էինք նրանց ազգագրութիւնն ու տնտեսական դրութիւնը: Այդ նիւթերն էլ այսօր հրատարակում ենք «Բազմավէպ»ում եւ յանձնում հայ ժողովրդական բանահիւսութեան պատմութեանը: Գծենք դրանց պատկերը.

1. Գողն ու անցուորականը

Մէկ գող քշերով մէկի դռան դուքը խարտոցով կտրում էր. մէկ անցուորական անց կենալիս մօտեցաւ էտ մարթուն և ասաց. «Էստէղ ի՞նչ ես անում, կարծես մէկ բանի վրայ ես»: Գողն ասաց. «Հա՛, սաղ եմ ածում»: Անցուորականն ասաց. «Էտ ի՞նչ սաղ է, օր ձէն չունի»: Գողը պատասխանեց. «Էտ սաղի ձէնը էքուց կ'իմանաս»:

2. Երգիչն ու դաքաւորը

Մէկ երգիչ իր երգելով դաքաւորին շատ ուրախացրեց. դաքաւորը խոստացաւ, որ վաղն իրան հզար օսկի կը տայ. դաքաւորի խօսքից երգիչն անչափ ուրախացաւ, որ էլ հաղ (սահման) չկար: Էքսի օրը երգիչն ներկայացաւ դաքաւորին, որ իր հաշուն տանայ: Դաքաւորն ասաւ. «Ինչ հաշիւ, էրէկ քշեր մէ բան դու ասիր, ես ուրախացայ, մէ բան էլ ես ասի, դու ուրախացար, էլ մեր մէջ հաշիւ չմնաց»:

3. Հալվա ծախողն ու իր կինը

Մէ աղքատ մարթ երիգունը իր կնդան ասաւ. «Ա՛յ կնի՛կ, հարստանալու ճամփէն ճարել եմ»: Կինը հարցրեց՝ ի՞նչպէս. մարթն ասաւ. «Հալվա կը չինեմ ու կը ծախեմ»: Կինը պատասխանեց. «Հալուէն եղ կ'ուզի, շաքար կ'ուզի, մէնաղ ալըրով չի ըլնի. դու ո՛րդեղից ունես, որ հալվայ չինես ու ծախես»: Մարթն ասաւ. «Մէնաղ ցամաք ալըրով կը չինեմ. ո՛չ եղ եւ ոչ էլ շաքար կը խառնեմ»: Կինը պատասխանեց. «Երբ մարդիկ համն առան ու տեսան, որ լաւը չէ, չեն առնի»: Մարթն ասաւ. «Աշխարհում անփորձ մարթիկ շատ կան. եթէ դրանցից ամէն մէկը մէ անդամ իմ հալուից առնի, ես փառաւոր կը հարստանամ»:

4. Գէ՞լ, թէ մարդ

Ոչխարին գէլի բերնից խլեցին եւ նա շատ ուրախացաւ, որ գէլից փրգւել է: Բայց ժամանակ չքաշեց, տեսաւ որ իրա փրգողի ճանդերու մէջ է եւ դանակ է սրում, որ իրան մորթի, ասաց. «Օղչարներս թէ՛ գէլի փայ ենք եւ թէ՛ մարթա-գէլի. մեր հըմար փրգութիւն չկայ. մենք ուտուելու բաժին ենք»:

5. Պարոնը եւ ծառէն

Մէ պարոն մէ ծառայ ունէր, բայց տան մէջ քնելու տեղաշորք չունէր. քնում էր իր վերարկուի մէջ եւ բարցն էլ իր զօղիքն էր չինում: Մէ առաւօտ պարոնը ձէն տըւեց. «Ա՛յ տղա՛յ, արի քնելու տեղաշորքերը հաւաքիր»: Ծառան պատասխանեց. «Լա՛ւ, դու քո շորերը հաղիր, ինչ մնաց, ես վեր կը հանեմ»:

© National Library of Armenia

6· Գիւղացի տէրտէրը

Գիւղացի տէրտէրը մկրտելու ժամանակ պղտիկ երէխին դրեց աւազանի տաք ջրի մէջ. երէխէն չկարողանալով տաքութեանը դիմանալ, մեռաւ: Տէրտէրը ձէն տըւեց. «Էս չէլաւ, մէ ուրիշ երէխայ բէրէք»:

7· Կողոպտուածը

Մէ մարդուց դողերը տասը թօփ կտաւ տարան. կողոպտուած մարդը ինքն իրան մխիթարում ու ասում էր. «Աչկէնները դուս գա, մէ 2–3 թօփից ամէն մէկից իրեք գեազ կտրած էր»:

8· Կոյրը եւ իր կինը

Մէ կոյրի կին իրան էսպէս գովեց. «Ա՛յ մարթ, թէ աչքերդ ինձ տեսնէին, կը զարմանէր իմ սիրունութեան վրայ»: Կոյրը պատասխանեց. «Երբ էդքան սիրուն իր, ի՞նչպէս մլիոն աչք ունեցող մարթիկ կէին, քէզի չառան, օր ինձպէս մէ քօր մարթու դուշար էլար»:

9· Կիսագրագէտ տէրտէրը

Մէ տէրտէրի եվ ասէին «Օշնեայ (օրհնեայ) տէ՛ր», նա պատասխանը չէր իմանում, որ ասէր. «Աստուած օշնի»: Պատասխանը մի կտոր փէտի վրայ գրել էր եւ կախ էր տուել կողքին: Երբ ժողովրդից մէկը բարեւ տար, կը նայէր տախտակին եւ պատասխանը կը տար: Մի օր էլ գիւղի քեադխուդէն պատահեց եւ ասաց. «Օշնեա տէր»: Այս անգամ տախտակը փէշի տակն էր մնացել. նայեց՝ չտեսաւ տախտակը որ գրուածով պատասխանէր, ուստի ասաց. «Փէշիս տըկինը քէզի օշնի»:

10· Աղքատը

Գիւղում մէկն աղքատացել էր. ասին. «Ո՛ւր ես էդքան աղքատ»: Նա պատասխանեց. «Ջանամ, մենք իշու եդընդած ենք». ուզում է ասել, թէ մեր իշանը սատկեցին, մենք էլ աղքատացանք»:

11· Ժլատ պարոնը եւ ծառան

Մէ հարուստ մարդ իր ծառային ասաց. «Ա՛յ տղա՛, դնա՛, մէ դանա բարակ թաղի չուն ճարիր էս մեր դարբունի (տան) հըմար»: Ծառան գնաց ու կատարեց իր տէրտրի ասածը, հապ բէրած չունը թաղէ չէր, այլ մէ գեարդանքօլօփտ բրթոտ չուն էր: Աղարարը եվ չանը տեսաւ, ասաց. «Ա՛յ տղայ, ես ասի՝ դնա՛ թաղի բի (բեր), դու էս մեծ, գեալլի (հօտի) չունն ես վե կալի բերի»: Ծառէն պատասխանը տուեց. «Աղարար ջա՛ն, էս գարը բունը որ դու ունես, էդ էլ մէ քանի օրից եա, հաց չուտելով, թաղի կը դառնայ:

12· Տիկին Շաբարը

Խեղճ տիկ. Շաբարը մեռել էր: Դրդցու կնիկն էկաւ տուն եւ իրա մարթուն ասաց. «Ա՛յ մա՛րդ, լարման Շաբարը մեռել է»: Իրանց աղջիկն ասաց. «Նանա՛, շաբարը, որ մեռել է, բա էսոլից դէն ինչո՞վ չայ կը դմենք»:

13· Տանուտէրն ու տիրացուն

Մամուռան գէղի տանուտէր Ղուկաս Կարապետեանը մէ օր տիրացուին ասաց. «Մէ թուղթ վեկալ ու մեր գէղի գժերի անումները գրիր, տեսնեմ քանի՞ դանա են»: Տիրացուն ասաւ. «Բարի է»: Մէ թուղթ ու պէսիլ վեկալաւ ու թղթի վրայ ավալի անումը տանուտէր Ղուկասինը գրեց. դուրարա մէ քանի հոգու անում էլ գրեց ու տուեց Ղուկասին: Երբ տանուտէրն իր անումը կարթաց, մաթը տարաւ ու ասաց. «Ողորմելի՛, ես որդէգի գիժն եմ, որ իմ անումը թղթի վիրեւի մասումն ես գրի»: Տիրացուն պատասխանեց. «Ին օրսանից ես գժուել, որ հինգ հզար փող ես տուէ մէ լօռի, որ քու հմար խալի բերի»: Տանուտէրն ասաւ. «Հալբաթ օր կը բերի»: Տիրացուն պատասխանեց. «Լա՛ւ, եվ օր լօռը խալիքը բերեց, քու անումը կը ջնջեմ, էնդուրը կը գրեմ»:

14· Մոլլա Նասրադինը եւ ձուրը

Մոլլա Նասրադինը ձութը կպցրել էր քնթին եւ եավաշ-եավաշ տուն էր էրթում: Մարթիք հարց տուին. «Մոլլա՛, ձութն ո՞ւր ես կպցրի քնթիդ»: Մոլլան պատասխանեց. «Մարթու ապրանքը դայիմ պիտի իրա աչկի առջեւն ընի»:

15· «Պարսկագէտ» Հայաստանցին

Մէ Հայաստանցի Պարսկաստանուց եա էր գնացել Էրեւան. նրան հարցրին. «Պարսկերէն էլ ես սովորի՞»· պատասխանեց՝ հայրաթ: Մէկը հարցրեց. «Աղէր գիտես, գլխին ի՞նչ կ'օսեն»· ասաց՝ Սար. «Մազերուն ի՞նչ կ'օսեն», ասաց՝ Սարախոտ. «Շընքին ի՞նչ կ'օսեն», ասաց՝ «սարա կոթ»: Ասին. «Գդակին ի՞նչ կ'օսեն», ասաց՝ «Սարաման»: Լսողները հազ արին ու գովեցին. «Բա՛հ-բա՛հ, ի՞նչ լաւ պարսկերէն է սորվի»:

16· Ունջուլը եւ իր կինը

— «Ա՛յ մարթ, ձեռ ու ոտ չունիս, էդ ճրաքի պատրուքը լաւ չես կարի», — ասաց կինը: Ունջուլը լուռ էր: — «Դու ասլան, — շարունակեց իր կինը, — ո՛չ մէ բանի պէտք չես. ես ասի, որ դու չես կարայ կարես»: — «Ճիշտ է, կնիգ, — պատասխանեց Ունջուլուն, — թէ ես լաւ կարող լինէի, առաջ էդ լիղուդ կը կըտրէի, որ էդքան զօռ չըտայիր»:

17· Ամրիկահայը եւ կապիկը

Մէ մարթ գնաց Ամրիկա եւ սկսեց կաթ ծախել. կէսը ջուր էր խառնում, կէսը կաթ: Հէնց էդպէս մէ քանի հարուր օսկի աշխատեց ու ճամբայ ընկաւ եդ էրթայ իր վայրեաթը: Ճամփին մէ գէղի պռկին, ծառի տակ, քնեց հանգստացաւ: Քնած վախտ, մէ կապիկ նրա օսկիների քիսակը գողցաւ ու վիրեւ էլաւ ծառի ծէրին, որ ծնուած էր դիր դեղը: Երբ էս մարթը զարթնեց քնից, տէսաւ իր օսկինէրի քիսակը կապիկի ձեռն է: Մտածեց՝ բա ի՛նչ անի-չանի, որ կապիկը վախիլ օսկիները գեղը չածի: Եաւաշ մէ քար գցեց կապիկի վրայ: Կապիկն էլ սկսեց մէ օսկի գցել մարթուն, մէ օսկին դէպ ջուրը: Երբ պրծաւ, մարթն ինքն իրան ասաց. «Վալլահ լաւ գաղաստան արաւ կապիկը, ինչ ջրից աշխատեցի, ջուրն էլ տարաւ»:

18· Մարդն ու կինը

Մէ մարթու կնիգ էկրակուր էր էփում. մարթը մէ գդալ գրեց բերանը եւ ասաց. «Աղի է»: Կինը վրայ պռծաւ, որ գդալով մարթին խփի. մարթը փախաւ կտուրը եւ ձեռքը դնելով մաջառին, կռացաւ եւ ասաց. «Ա՛յ կնիգ, մարթը էն է, որ խօսքը մէգ ըլնի. կերակուրդ աղի է»:

19· Աղուէսն ու հիւանդ ուղտը

Աղուէսը նստել էր հիւանդ ըղտի մոդ, որ մեռնէր եւ միսը ուտէր. յանկարծ ուղտը աչկը բցեց աղուէսի վրայ եւ ասաց. «Աղուէս ախպէր, ո՛ւր ես էստեղ երգար նստի, կարծես մէ բանի ես սպասում»: Աղուէսը կմկմալով պատասխանեց. «Հա՛, դու հիւանդ ես եւ հիւանդութիւնդ էլ մահացու է. մենք էլ պարզ բան է, մսի ենք կարօտ. էրգար ժամանակ է, որ քաղցած ենք. սպասում ենք քո վերջանալուն, որ քո մսից ուտենք»: Ուղտը պատասխանեց. «Բարեկա՛մ, ի զուր է քո մնալը, մի զուցէ դու քաղցած սատկես, տեսնում ես, որ վիղս որքան էրգար է. էս օրուանից որ հօքիս ուղի ինձնից բաժանուի, քառասուն օր կը տեւի. դու քաղցած մնալով ինձնից թէզ կը մեռնես. հիմի դու ես իմանում»:

20· Թամբալ մարդը եւ իր կինը

Մէ կին թունդրի մօտ հաց էր թխում. մարդը մօղը նստել էր եւ չէր շարժւում. կինն ինչ ասում էր. «Ա՛յ մարթ, վեր կաց, գնա էն կողմը, թող հաց թխեմ»: Թամբալ մարթն ասում էր. «Վա՛յ, վո՞վ

© National Library of Armenia

է վեր կէնում»։ Կինը ճարը կտրած, բըռնեց կարպետից եւ մարթին քաշ տալով տարաւ թնդրի միւս կողմը։ Մարթը նայեց չորս կողմը և ուրախութեամբ ասաց. «Ղուրթ են ասում օր մարթս անթեւ թըռչուն է. նոր թունդրի էն կողմ ի, հիմի էկայ էս կողմը»։

21. Գիւղացին եւ գումբէթը

Մէ գիւղացի իր ընտանիքով ապրում էր գումբէթածածկ տան մէջ. հին տուն էր. գումբէթը սկսաւ ճաքճաքել. նա էլ սկըսաւ ցեխով ճաքերը լցնել։ Մի տարի անցաւ. մի օր էլ գիւղացին դաշտումն էր. երբ տուն էկաւ, տեսաւ գումբէթը ըլել էր երեխանէրի վրայ եւ ամէնն էլ մեռել էին. շատ բարկացած ասաց. «Անտէրի գումբէ՛թ, բա չկարցար մեզ լուր տէիր օր ըլչում ես, որ մենք քու տակից դուս քաշուէինք»։ Գումբէթը լիզու էլաւ ու ասաց. «Քանի անգամ բերանս բացայ, համա դու ցըխով լցրիր բերանս ու կապեցիր. ես տարով առաջ քեզի խմացրի, համա դու անխելք իր, չլսեցիր. վո՞վ է մեղաւոր»։

22. Թազաւորի տղէն եւ տղանարողը

Թազաւորի տղէն մէ գիշեր դուսը մընաց։ Թազաւորն խսկոյն յայտարարեց. «Ով որ տղիս այս գիշեր ճարի եւ բերի, հինգ հզար օսկի ընձայ կը ստանայ»։ Բայց տղի ճարողը ինքն իրան մտածեց. «Լաւ է, որ էգուց տանեմ եւ շատ օսկի առնեմ»։ Միւս օրն տղային տարաւ ու տուեց թազաւորին. իր խոստացած օսկին նա մերժեց եւ էսպէս ասաւ. «Ես խոստացել ի, որ էրէկ գիշեր տղիս ինձ բերէիր, որ գիշերը դուսը չը մնար. հիմի օր մէ գշեր դուսն է մնացի, էլ նուէր չունես»։ Այդպէս անվարձ մնաց թազաւորի տղի ճարողը։

23. Առբաբն ու ծառէն

Առբաբն ծառային ասաց. «Էգուց դու պիտի էրթաս այս ինչ գեղն ու դաս»։ Ծառէն լսեց առբաբի պատուէրը եւ գիշերը քունը փախաւ, էլ քունը չէր տանում. ինքն իրան ասաւ. «Հիմի օր քունս չէ տանում, էրթամ առբաբի ասած գեղն ու ետ դամ»։ Գիշերով գնաց էտ գեղը եւ առաւոտանց ետ էկաւ. առբաբը դեռ քնած էր։ Երբ առբաբը վեր կացաւ, նախաճաշն արաւ ու վերջացրեց, ծառային ասաց. «Գոր ձերդ վերջացրուր ու շուտ գնա՛ էն գեղը, որ ասի»։ Ծառան պատասխանեց. «Աղա՛, դեռ դու քնած իր օր ես գնացի եւ ետ եկայ»։ Առբաբը մէ լաւ նայեց ծառային ու ասաց. «Ապո՛ւշ, մդամ հէնց գնալ ու դալն է. չէ՞ օր բան ունէի»։ Ծառէն պատասխանեց. «Զեմ իմանում, դու ասիր՝ պիտի էրթաս, ես էլ գնացի. էլ բան չեմ գիդի»։

24. Սատանէն ու աղքադը

Սատանէն հանդիպեց մէ աղքադի եւ ասաց. «Որչանք ձեռք մեկնես անցուորականներին, որ մէ քանի կոպէք օգութ ստանես, արի ես քէզի մէ քիսակ կու տամ, որ միշտ քու մօտ պահես ու միջիցը օրական մէ դանա օսկի վեկալնես, էտ քիսկի միջի օսկին չի պակնուի. որչանք ժուդ որ ուզես, օրական մէ օսկին դուս կու գայ։ Քիսակը հէնց քէզի, համա մէ շառթ կայ, երբ որ ուզէցար էտ օսկիներիցը քէզի հըմար ծախես, աւալ պիտի քիսակն էրես։

Աղքադը էդ շառթը զարուլ արաւ ու քիսակը սատանի ձեռքից առաւ։ Ղորթ որ ամէն յիրիզուն քիսակից մէ դանա օսկի էր վեկալնում։ Էս աղքադը տարիներ իրա աղքադութունից ձեռք չը քաշեց եւ օրը մէ օսկին հանեց քիսակից, համա սրդից դուս չէկաւ քիսակն էրի ու քօփա օսկիքը ծախսի։ Տարիներ էսէնց էկանցնցին. աղքադը ձեռք մեկնեց մինչեւ որ մէ օր մեռաւ, գնաց ու քօփա օսկիքը մնացին, յիրուշները տարան կերան։

Առակս էն է, որ աղքադը իր բոլոր-բովանդակ ումրը ֆաղիրութունով անցկացրեց. սրդից չեկաւ քիսակը էրի, գոնէ մէ առ ժամանակ բախտաւոր ապրի։

25. Փող կորցնողը եւ չօբանը

Մէ մարթ հարուր թուման փող, ջուր խմելու ժամանակ, աղբուրի վրայ թողեց ու մտիցն ընկաւ փողը վեկալնէր։ Մէ լրուշ մարթ էդեւից էկաւ, փողը վե կալաւ եւ մէ յիրուշ ճամփով գնաց, կորաւ։ Փող կորցնողը երբ միան էկաւ, որ փողը աղբուրի վրայ է թողել, ետ էկաւ։ Տեսաւ մէ չօբան իր օխչարները պառկեցրել է, ինքն էլ հաց է ուտում։ Հասնելուն պէս ասաւ. «Է՛յ չօբա՛ն, փողս էս աղբուրի վրայ ջուր խմելու ժուդ մտիցս ընդել է ու կորցրել եմ. դու ես վե կալի, ետ տուր»։ Միամիտ չօբանը որտեղից էր փող տեսել, համմա մարթը ձեռք չէր քաշում։

Չօբանը՝ «Վալլահ-բիլլա ես չեմ տեսի, ախպէր ես լուր չունեմ»։ Փողատէրը համբերութունը հատեց, տուր թէ կը տաս չօբանի գլխին. նա էլ գեղին ընդաւ ու մեռաւ։ Փողատէր, դէ փախի որ կը փախչես։ Էս ամէնը Մովսէս Ատուածատրոսը տեսաւ, որ չօբանը նահախկ սպանուեց։

Մովսէսը Ատուածուց հարց տուեց. «Տէր-Ամենակարող, էս ինչ դաղաստան է, որ քո իրաւունքով էլաւ»։ Տէրը պատասխանեց. «Իմ դորձերն արդար են. այն մարթն, որ հարիւր թուման կորցրել էր, նրա հէրը գանող մարթուն պարտական էր, էն իրա հախին հասաւ։ Էն սպանուող չօբանը փող կորցնողի հօրն էր ըսպանել։ Էն էլ իր հօր արունի թախտասը հանեց։ Իմ գիդութեամբ դրանց մէջ էլ օչինչ հաշիւ չկայ. իրարու պարտական չեն»։

26. Ուղտն ու գէլը

Ուղտն ու գէլը իրանց ճաքերով մի տեղ ապրում ին։ Երբոր հեռու տեղ էրթին, փաստով (հերթով) կը գին, ճաքերուն գլուխ քաշէին։ Էսէնց անց կեցաւ մէ քանի ժուդ։ Համմա գէլը երբ ուղտի փափուդ ճաքերուն տեսնում էր, բերնի ջըրերն էրթում էր։ Մէ օր գիլու փաստին էր, որ գէր ճաքերուն գլուխ քաշէր, որ չընէր վախել (յանկարծ) մէ բլա գէր խեղճ ճաքերու գլխին։ Էկաւ, տեսաւ ու էլ թաղաթ չարաւ. բռնեց ուղտի մէ չաղ ճաքին ու կէրաւ. էլ ընայեց որ ուրթում (երդում) է կերի, որ խիանաթ չանի ուղտին, ու ճաքերուն հաւասար ընդղի (նայի)։ Երբ ետ գնաց ուղտի մօդ ասաւ. «Ուղտ ախպէ՛ր, ճաքերուցը մէկը չկայ, չեմ յիմանում ինչ է էլի»։ Ուղտն ասաւ. «Իմոնցէն է, թէ քոդոնցէն»։ Գէլն ասաւ. «Էնց էդ իմ ու քուդն էլաւ, որ տափակ ոդղներէն մէկը չկայ»։

27. Հարուստը եւ խելօքը

Մէ հարուստ մարթու դէդնի տակ պահած օսկիները դողցել ին դողանը։ Հարուստը հա՛յ գլխին էր տալիս, միրուքն էր քանդում, տալիս էր գլխին եւ ուզում էր իրան սպանէր։ Հէնց էդ հաղաղէն մէ խելօք ու գիդուն մարթ անց էր կենում. էդ որ տեսաւ, մօտ գնաց հարստին ու ասաւ. «Որչանք էր օսկիդ, որ դողերը տարել են»։ Հարուստը մէ մենձ քար կէր իր մօդ, ասաւ. «Խոտուր չանք էր»։ Խելօքն ասաւ. «Քանի տարի է օսկիդ պահած էր»։ Հարուստն ասաւ. «Եռասուն տարի»։ Խելօք մարթը քարը վեկալաւ, դրեց օսկու տեղը, հողը ածաւ գլխին ու ասաւ. «Օսկին եռասուն տարի է քէզի ինչ պէտք է էկի, որ հիմի զայ։ Ախէր ո՛ւր ես քեզի սպանում։ Քեզի անպէտք էր օսկին, ոնց որ էս քարը, քանի որ հողի տակն է մնացի, չէ էս օսկին, չէ քարը։

28. Մանասէր քեռին

Մանասէր քէռին գնաց Ջուղա ու մէ քանի օրից ետ էկաւ։ Շատերը գնացին գիդանի (տեսութեան)։ — «Ի՞նչ կայ, չը կայ քաղաք, Մանասէր քէռի» հարցրին մէ քանիսը։ Մանասէր քէռին ասաւ. «Բա չասէք, տէրութունը քառասուն դանա մօլէքին բռնել է տուել»։ — «Վո՞ր մօլէքին» հարցրեցին։

— «Ապա Նուբ Օլլին ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ» կանդ առաւ։ Հարցրին. «Քէռի՛, էդ եռասուն ինը. էն մէկը վո՞վ է...»։

(Շար. 1)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

© National Library of Armenia